Կարգապահական գործ թիվ ԿԳ-21004

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հուլիսի 09-ի թիվ 280-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/166-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԵ ՄՈՐԻՍԻ ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մարինե Ֆարմանյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Մանե Կարապետյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի և Պավել Գյուլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Վահե Մորիսի Արմենակյանին (արտոնագիր՝ 881) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Խաչիկ Ասլանյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ իր և փաստաբան Վահե Արմենակյանի **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** միջև կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր:

Դիմողը նշել է, որ փաստաբանը պայմանագրով նախատեսված պարտավորությունները թերի է կատարել այն դեպքում, երբ Դիմողի կողմից ամբողջությամբ վճարված է եղել փաստաբանական ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարը:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը պետք է իրականացներ իր իրավունքների պաշտպանությունը Երևանի քաղաքապետարանում և ՀՀ դատական ատյաններում, սակայն Փաստաբանն ընդամենը մեկ դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան և որևէ այլ գործողություն չի կատարել: Երևանի քաղաքապետարանում որևէ վարույթ չի հարուցվել և Փաստաբանը որևէ վարույթի չի մասնակցել:

Դիմողը հայտնել է նաև, որ ինքը 2020թ-ի հոկտեմբեր ամսից փորձել է

Փաստաբանի հետ կապ հաստատել, ինչն իրեն հաջողվել է միայն 2020թ. նոյեմբերի վերջին, որից հետո փաստաբանը խուսափել է պատասխանել իր հեռախոսազանգերին:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է փաստաբան Վահե Արմենակյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել, վերադարձնել գործի նյութերը և իր կողմից վճարված գումարը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 02.03.2021թ. թիվ 40-Ա/ԿԳ-21004 որոշման հիման վրա փաստաբան Վահե Արմենակյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք) 3.5.5 և 3.6.1** ենթակետերի խախտման հատկանիշներով:

03.03.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է և ըստ էության հաստատել նախկինում ներկայացված դիրքորոշումը և ավելացրել, որ Փաստաբանը վերադարձրել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Պալատի խորհրդի նիստին Փաստաբանը ներկայացել է և ըստ էության հայտնել հետևյալը.

Իրավաբանական օգնություն ստանալու նպատակով իրեն է դիմել Խաչիկ Ասլանյանը և հայտնել, որ 15.09.1988 թվականին Մաշտոցի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեն իրեն թույլատրել է ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբանցք, թիվ 14 շենքին հարակից հողամասի վրա կառուցի ավտոտնակ, որն իր կողմից իրականացվել է, սակայն քաղաքապետարանը մերժել է գրանցել իր սեփականությունը: Փաստաբանը և Դիմողը հանդիպել են վերը նշված հասցեում, որպեսզի Փաստաբանի համար հասկանալի լինի՝ ինչի մասին է խոսքը և այդ ժամանակ Դիմողը փոխանցել է Փաստաբանին որոշ փաստաթղթեր:

Փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո 22.07.2020թ. Փաստաբանը դիմել է Երևանի քաղաքապետարան և խնդրել հայտնել՝ օրենսդրական ինչ կարգավորում է առկա:

19.08.2020թ. դիմել է Երևանի քաղաքապետարան վարչական վարույթի նյութերը ուսումնասիրելու համար, որին ի պատասխան հայտնել են, որ նշված հարցին կարող են անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության ավարտից հետո:

Փաստաբանը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության ավարտից հետո Դիմողի հետ գնացել է Երևանի քաղաքապետարան և ծանոթացել վարչական վարույթի նյութերին:

Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու ընթացքում պարզվել է, որ հողամասը գտնվում է Հողային օրեսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Փաստաբանը հայտնել է, որ հաշվի առնելով, որ հողամասը գտնվում է Հողային օրեսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում՝ դատական կարգով վեճն ի օգուտ Դիմողի լուծվելու հավանականություն չի տեսնում:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 30.04.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 03.05.2021թ-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 09.07.2021թ. ժամը 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ՝ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 20.07.2020 թվականին Վահե Արմենակյանի և Խաչիկ Ասլանյանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ Պայմանագիր)**, որի 2.1. կետի համաձայն՝ Կատարողը իրականացնում է Պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ՀՀ

դատական ատյաններում և Երևանի քաղաքապետարանում: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

2. Դիմողի կողմից 20.07.2020թ. Փաստաբանին տրվել է լիազորագիր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված 20.07.2020թ. լիազորագրի պատճենով:*

3. 21.07.2020 թվականին Վահե Արմենակյանի կողմից տրվել է ստացական այն մասին, որ Խաչիկ Ասլանյանից ստացել է ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը: *Սույն փաստը հաստատվում է 21.07.2020 թվականին Վահե Արմենակյանի կողմից տրված ստացականի պատճենով:*

4. Փաստաբանը 19.08.2020թ. և 29.09.2020թ. դիմումներ է ներկայացրել Երևանի քաղաքապետարան: *Սույն փաստը հաստատվում է Երևանի քաղաքապետարանի 31.08.2020թ. և 09.10.2020թ. պատասխան գրություններով:*

5. Փաստաբանը Դիմողի հետ միասին հանդիպել է Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներին և քննարկել վեճի լուծման հեռանկարները, որի ընթացքում Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները տեղեկացրել են, որ վիճելի հողը ներառված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. Փաստաբանը Դիմողին է վերադարձրել ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարից 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը: *Նշված փաստը հաստատվել է կողմերի բացատրություններով:*

7. Փաստաբանը 13.08.2020թ., 20.08.2020թ., 27.09.2020թ. Դիմողի էլեկտրոնային հասցեին ուղարկել է Երևանի քաղաքապետարանին ուղղվող դիմումները: *Սույն փաստը հաստատվում է փաստաբանի էլեկտրոնային հասցեից արտատպված էլեկտրոնային նամակագրությամբ:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վահե Արմենակյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 24.10.2009թ., և 2014-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է հինգ կարգապահական վարույթ, որոնցից երեքով կարգապահական տույժը մարվել է: 05.09.2014 թվականին Փաստաբանը ենթարկվել է «տուգանք» կարգապահական տույժի, որը մարված չէ, իսկ 04.02.2021 թվականին ենթարկվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժի, որն ուժի մեջ չի մտել:

<u>7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահե Արմենակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական

պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե

▪ ***արդյոք փաստաբան Վահե Արմենակյանը վստահորդին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին.***

▪ ***արդյոք փաստաբան Վահե Արմենակյանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր իր վստահորդի հանձնարարությունը պատշաճ կատարելու համար.***

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Դիմողին գործի ընթացքի մասին տեղեկացնելու վարքագիծը Խորհուրդը հաստատված է համարում գործի քննության ընթացքում կողմերի տված բացատրություններով, ինչպես նաև Փաստաբանի կողմից ներկայացված էլեկտրոնային նամակագրության պատճեններով:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ արձանագրվում է, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետով սահմանված կանոնի խախտման փաստը չի հաստատվել:

Փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարությունը պատշաճ կատարելուն ուղղված ջանքեր գործադրելու փաստը Խորհուրդը հաստատված է համարում՝ հաշվի առնելով հետևյալ փաստերը.

- Փաստաբանը հանդիպել է Դիմողին հողամասի գտնվելու վայրում՝ տեղում իրավիճակը պատկերացնելու համար.

- Փաստաբանն ուսումնասիրել է Դիմողի կողմից իրեն տրամադրված փաստաթղթերի փաթեթը.

- Փաստաբանը դիմումներ է ուղղել Երևանի քաղաքապետարան.

- Փաստաբանը և Դիմողը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ հանդիպմանը, որի ընթացքում է միայն Փաստաբանը տեղեկացել, որ վիճելի հողամասը ներառված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներում:

Խորհուրդը Փաստաբանի բարեխղճությունը գնահատելու համատեքստում ուշադրության արժանի հանգամանք է համարում նաև այն, որ Փաստաբանը, հետագայում չտեսնելով վեճի լուծման դատական հեռանկար, վերադարձրել է Դիմողից ստացած հոնորարից 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահե Մորիսի Արմենակյանի (արտոնագիր՝ թիվ 881) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Վահե Մորիսի Արմենակյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մարինե Ֆարմանյան

09 հուլիս 2021թ.
թիվ ԿԳ/166-Ա
ք. Երևան